ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 սեպտեմբերի 2023 թվականի N 1577 - Ա

ԱԶԱՏԻ ԵՎ ԱՊԱՐԱՆԻ ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ՄԵՌՅԱԼ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾԵԼԻ ՄԱՄՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 3-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Թույլատրել «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությանն Ազատի ջրամբարի 9.2 մլն մ^3 մեռյալ ծավալից մինչև 5 մլն մ^3 ջրաքանակի ջրառի իրականացումը՝ սակավաջրությամբ պայմանավորված ոռոգման ջրի դեֆիցիտը մեղմելու նպատակով:

2. Թույլատրել «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությանն Ապարանի ջրամբարի 10 մլն մ^3 մեռյալ ծավալից մինչև 4 մլն մ^3 ջրաքանակի ջրառի իրականացումը՝ սակավաջրությամբ պայմանավորված ոռոգման ջրի դեֆիցիտը մեղմելու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

14.09.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ